

նույնիսկ հարուստ հայերի մի մասը, վախենալով կորցնել իր իրավունքները, ընդունեց ունիան Ս. Տ. Քիլիցկու հոգվածի արժանիքներից մեկն էլ այն է, որ նա ցույց է տալիս ունիայի հարցում հայերի և ուկրաինացիների համատեղ պայքարը, նրանց բարեկամական հարաբերությունների ամրապնդումը հանուն ազգային ինքնությունության պահպանման:

Հայ և ուկրաինական ժողովուրդների պատմական կապերի ուսումնասիրման գործում մեծ հետաքրքրություն է ներկայացնում այնպիսի հարց, ինչպիսին է Գալի Գալաուստանագրքի իրավական նորմաների կիրառումը Լվովում և տարբեր սոցիալական խմբավորումների ներկայացուցիչների իրավիճակի որոշումը: Այս հարցը քննարկված է Վ. Ս. Կուլչիցկու հոգվածում:

Հայ մշակույթի ներկայացուցիչներից մեկի՝ Ստեփանոս Լվովցու կյանքի և փիլիսոփայական հայացքների ուսումնասիրման է նվիրված ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Կ. Չալոյանի հոգվածը:

Գրախոսվող ժողովածուի մեջ տեղ են գտել նաև այնպիսի հոգվածներ, որոնք վերաբերում են Ուկրաինայի տերիտորիայում եղած մյուս հայկական դպրոցներին:

Վ. Բ. Գրաբովիցկու հոգվածում լուսարանված է հայկական դպրոցի պատմությունը հեղափոխական Մեյառին քաղաքում, որը գտնվում էր կարևոր առևտրական հանապարհների խառնուրդում և սահմանակից էր Գալիցիային ու Մոլդովային: XV—XVII դդ. առաջին կեսին Կիևի հայկական կյանքի պատմությանն է նվիրված Դ. Ի. Միշկոյի հոգվածը: Երկու հեղինակներն էլ արխիվային փաստաթղթերի հիման վրա ներկայացնում են հայերի կյանքը հիշատակված քաղաքներում, ցույց են տալիս հայերի իրավական վիճակը, նրանց աշխատանքային գործունեությունը, սոցիալական բաժանումները և ունեցվածքային շերտավորումը: Հայկական բնակավայրերում, հայ և ուկրաինացի բնակչության միասեղ պայքարը կաթոլիկ հոգևորականության դեմ, ինչպես նաև նրանց միջև հաստատված սերտ բարեկամական կապերը:

Բոլորովին նոր և մինչև այժմ պատմագրության մեջ չլուսարանված հարցի է նվիրված Զ.

Շեչենկոյի XVII—XVIII դդ. ուկրաինական կաղանկան գործի մեջ հայերի մասնակցության վերաբերյալ հոգվածը:

Հետաքրքիր հարցեր են առաջադրված Վ. Ռ. Գրիգորյանի «Արևմտյան Ուկրաինայի հայկական դպրոցների «կտրինժորաց» եզրայությունների» մասին: Հոգվածում, հայկական ազդյունների հիման վրա հեղինակը ցույց է տալիս «կտրինժների եզրայության» աղանդներն ու զարգացումը, ընդհանուր գծերով լուսարանելով նրանց գործունեությունը:

Ղրիմի հայկական բնակավայրերի առաջացման պատմությանն է նվիրված Վ. Ա. Միրայիլյանի հոգվածը: Բազմաթիվ փաստաթղթերի և տապանագրային ազդյունների հիման վրա հեղինակը հանգում է այն եզրակացության, որ սկսած XI դարից Ղրիմի թերակղզում և հատկապես նրա ծովափնյա շրջաններում հիմնվեց հայկական դպրոց՝ ստվար բնակչությամբ, որը XIV դարի 30-ական թթ. լրացվեց հայ դպրոցականների նոր հոսքով և XIV—XV դդ. մինչև այժմ շտեմեված տեղեկական և մշակութային վերելք ապրեց:

Հոգվածների վերջին խմբի մեջ (Լ. Մելիքսեթ-Քեկ, Վ. Հակոբյան, Յա. Դաշկևիչ, Ռ. Վադիյ մտնում են ազդյունադիտական և բիրչիոգրաֆիական նյութերը, որոնք շատ հետաքրքիր են և, որ կարևոր է, ներկայացնում են մեծ արժեք ինչպես ուկրաինացի, այնպես էլ հայ հետազոտողների համար:

Ցանկալի է, որ առաջիկայում հայ-ուկրաինական թեմատիկայով զբաղվող հեղինակները աշխիռ մեծ ուշադրություն դարձնեն արխիվային նյութերի բացահայտմանը և լուսարանեն բնդհանրական բնույթի թեմաները: Այդ բանի համար անհրաժեշտ է հետադա ավելի սերտ համագործակցություն Ուկրաինայի և Հայաստանի պատմաբանների միջև: Եվ անկասկած է, որ ժողովածուն կծառայի հայ-ուկրաինական գիտական կապերի ամրապնդմանը և երկու բարեկամ ժողովուրդների հետագա բազմակողմանի հարաբերությունների զարգացմանը:

Զ. ԳԱԼՍՅԱՆ

Ա. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ, Հաղորդի բարբառը, ՀՍՍՀ ԳԱ Ռատարակչություն, 1965, 371 էջ, գինը 1 ո. 30 կ.:

Հայերենի բարբառները, որոնք անհետացման ճանապարհին են գտնվում, շատ նյութ կարող են տալ հայոց լեզվի պատմության տարբեր հարցերի լուսարանման համար, ուստի նրանց

ուսումնասիրումը հայ լեզվաբանության կարևոր ու անհետաձգելի խնդիրներից է: Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը զգալի աշխատանք է կատարել և շարունակում է կատարել հայ-

րենի բարբառների ուսումնասիրության դժուր
ինստիտուտի հրատարակած բարբառագիտական
վերջին մենագրությունը նվիրված է Հազրութի
բարբառին:

Հազրութի բարբառը, որպես ինքնուրույն բար-
բառ, հայտնագործել է պրոֆ. Ա. Ղարիբյանը
իր «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ»
(1939 թ.) աշխատության մեջ: Սակայն բար-
բառների մի ամբողջ ճյուղին նվիրված աշխա-
տության մեջ առանձին բարբառները, բնակա-
նաբար, հանգամանորեն չէին կարող ուսում-
նասիրվել: Ա. Ղարիբյանն այդ աշխատության
մեջ Հազրութի բարբառն ուսումնասիրել է առա-
վել ընդհանուր գծերով, և զգացվում էր բար-
բառի մենագրական ուսումնասիրության կարի-
քը: Պոզոսյանի «Հազրութի բար-
բառը» ծավալուն աշխատությունը լրացնում է
այդ բացը:

Բարբառի ուսումնասիրությունը կատարված է
բազմակողմանիորեն. հեղինակը քննում է բար-
բառի հնչյունական համակարգը, ձևաբանական
ու շարահյուսական կառուցվածքը, բառային
կազմը: Աշխատության վերջում տրված են նը-
մուշներ ու բարբառագիտական քարտեզներ, նե-
րածական մասում տրված են տեղագրական, վի-
ճակագրական ու մատենագիտական անհրաժեշտ
տեղեկություններ:

Ուսումնասիրությունը հիմնականում կատար-
ված է ընդունված ավանդական հետազոտու-
թյունների եղանակով. իր ժամանակակից վի-
ճակում նկարագրվում է բարբառի կառուցված-
քը ըստ առանձին բնագավառների և, որպես կա-
նոն, համեմատվում գրաբարի համապատասխան
երևույթների հետ:

Գրախոսվող աշխատության առաջին մասը
նվիրված է բարբառի հնչյունական համակարգի
նկարագրությանը: Ըստ հեղինակի, Հազրութի
բարբառը ունի 54 հնչյուն, որից 12-ը՝ ձայնա-
վոր, 42-ը՝ բաղաձայն: Բարբառում կան գրա-
կան հայերենի բոլոր ձայնավորները և բոլոր
բաղաձայնները (բացի Ծ-ից): Գրականի համե-
մատությամբ ունեցած մյուս ավելի ձայնավոր-
ներն ու բաղաձայնները հետևանք են գրականի
շատ հնչյունների քմայնացման, որ մեծ տարա-
ծում ունի ուսումնասիրման ենթակա բարբառում:

Այնուհետև Ա. Պոզոսյանը հանգամանորեն
(էջ 13—78) նկարագրում է ձայնավորների ու
բաղաձայնների փոփոխությունը, որ տեղի է ունե-
ցել Հազրութի բարբառում ի տարբերություն
գրաբարի: Հեղինակն այդ անում է՝ հաշվի առ-
նելով հնչյունի դիրքը, տվյալ բառի վանկերի
քանակը, շեշտի դերը (ձայնավորների կապակ-
ցությամբ) և այլն:

Ներկայացնելով հնչյունական օրինաչափու-
թյունները, որ ընդհանուր են ամբողջ Հազրութի

բարբառին, հեղինակը միաժամանակ նշում է
այն տարբերություններն ու յուրահատկություն-
ները, որ կան տարբեր գյուղերում (տե՛ս էջ 13,
14, 15, 16, 17, 18 և այլն): Սա գրախոսվող
աշխատության արժանիքներից է:

«Հազրութի բարբառը» մենագրության երկ-
րորդ և ամենածավալուն մասը (էջ 82—268)
նվիրված է ձևաբանությանը: Այս մասում ամե-
նայն մանրամասնությամբ քննվում է բարբառի
ձևաբանական կառուցվածքը՝ բոլոր խոսքի մա-
սերն իրենց ձևաբանական բոլոր հատկանիշնե-
րով:

Հազրութի բարբառում գոյականի քերականա-
կան կարգերը գրական հայերենի համեմատու-
թյամբ մեծ տարբերություններ ունեն: Գոյակա-
նի հոգնակին աչքի է ընկնում կազմության բազ-
մաձևությամբ, որ արտահայտվում է հանձինս
թե՛ բարբառում առկա հոգնակերտ բաղաձայնի
մասնիկների (էր, նէ, էք՝, էրք՝, ք, օտ, օտէք՝,
աք, ունք, ուք) և թե՛ այն բանի, որ միևնույն
գոյականը երբեմն կարող է ստանալ հոգնա-
կերտ տարբեր մասնիկներ: Իրենք միայն մեկ
օրինակ. եզն բառը ունի հետևյալ հոգնակի ձե-
վերը՝ յըէզներ. յըէզէնք՝, յըզնօտէնք՝ յըզնօ-
տէք՝:

Հազրութի բարբառի հոլովական համակարգի
ամենաուշագրավ յուրահատկությունն այն է, որ
բառերը որոշյալ և անորոշ առումների դեպքում
ենթարկվում են տարբեր հոլովումների. ըստ ո-
րում անկախ տվյալ բառի հոլովումից, այն ա-
նորոշ առման դեպքում ենթարկվում է ու հո-
լովման: Ստացվում է, որ հոլովումը Հազրութի
բարբառում միաժամանակ գոյականի քերակա-
նական առման արտահայտության միջոց է:
Այսպես, օրինակ, փաղ, կավ բառերը որոշյալ
առման դեպքում ենթարկվում են համապատաս-
խանաբար ի և է հոլովումներին (փաղին, կը-
վէն). իսկ որոշյալ առման դեպքում՝ ու հոլով-
ման (փաղու, կրվու): Որոշյալ առման դրսևոր-
ման համար այստեղ դեր ունի նաև որոշիչ հոդը,
որը, ինչպես երևում է վերի օրինակներից, հան-
դես է գալիս համապատասխան հոլովաձևերի
հետ: փողին, կրվէն և նման հոլովաձևերը ա-
ռանց են հոդի չեն գործածվում Հազրութի բար-
բառում: Նշենք նաև, որ անորոշ առման արտա-
հայտության հիշյալ երևույթը հատուկ է միայն
արտաքին թեքման հոլովումներին:

Ա. Պոզոսյանը հանգամանորեն քննում է բար-
բառի բոլոր (8) հոլովումները, սահմանում հա-
մապատասխան օրինաչափություններ, ցույց տա-
լով, թե որ հոլովմանը որ բառերն են ենթարկվում
և նշում է համապատասխան շեղումները:

Թեքման ժամանակ բառերը հաճախ ենթարկ-
վում են հնչյունական այլևայլ փոփոխություն-
ների՝ կապված բառի աճման, նրա հետևանքով

ստեղծված հնչյունական նոր դիրքի և այլ հանգամանքների հետ: Ա. Պողոսյանը ձգտել է ձևաքանական երևույթների քննությանը զուգահեռ լուսարանել նաև այս հարցերը: Այսպիսի երևույթների մի մասը կա նաև գրական հայերենում, բայց Հաղրութի բարբառում կան նաև այնպիսի, այսպես ասած, ոչ սովորական հնչյունափոխական երևույթներ, որոնք հատուկ են այդ բարբառին: Օրինակ՝ ուզղ. մածուն — սեռ. մազնու, ուզղ. կրծէզյ — սեռ. կրզկու (կամ կրզկէն), ուզղ. խշնա — սեռ. խու (խուխու, խուխէն) և այլն: Ցավոք, հնչյունափոխական այսպիսի յուրահատուկ երևույթները քննվել են միայն առիթներով, և աշխատության մեջ չկա դրանց՝ իրրև օրինաչափությունների, ամփոփ քննությունը:

Նկատելի է, որ այսպիսի փոփոխությունները մեծ չափերի են հասնում բարբառներում՝ ի տարբերություն գրական լեզվի: Դա, ըստ երևույթին, այն պատճառով է, որ գրական լեզվում բառապատկերը մարդու գիտակցության մեջ կայունացած է գրությամբ, և այդ հանգամանքը համեմատաբար սահմանափակ է դարձնում նրա փոփոխությունների հնարավորությունները: Իսկ բարբառում (ինչպես և առհասարակ անգիր լեզվում), որը զուրկ է բառապատկերը կայունացնող այդ կարևոր հանգամանքից, մեծ չափերի են հասնում այդ կարգի փոփոխությունները:

Մենագրության մեջ ուշադրություն է դարձված նաև Հաղրութի բարբառին հատուկ, այսպես կոչված, վերլուծական հոլովաձևերի վրա (էջ 90—95): Բարբառում բացառական, գործիական, ներգոյական հոլովները, բացի համապատասխան վերջավորություններով կազմվելուց, ունեն նաև արտահայտության այլ միջոց. ձևավորվում են բառի սեռականի և անա, անալ, ասըմ, ինչպես և նըլստա, նըլստավ, նըլստըմ մասնիկների միջոցով, որոնք չեն կցվում բառին, այլ առանձնացած վիճակով գործածվում են բառի հետ: Թեև ոչ բոլոր գոյականների նըլված հոլովները կարող են կազմվել հիշյալ եղանակով, այնուամենայնիվ այդ հետաքրքրական երևույթը շատ է տարածված Հաղրութի բարբառում, և մենք համամիտ չենք հեղինակի հետ, թե այն սոսկ ոճական նշանակություն ունի (էջ 91):

Աշխատության մեջ քննված են նաև բազմաձև հոլովումները՝ այն երևույթը, որ միևնույն բառը կարող է հոլովվել տարբեր հոլովիչներով, պատկանել տարբեր հոլովումների: Դա ավելի շատ վերաբերում է հոգնակի թվի հոլովմանը և պայմանավորված է հոգնակի ուղղականի կազմությամբ: Գրաբարյան հոլովումների մնացորդները և հոգերը քննելուց հետո հեղինակն անցնում է ածականին: Աշխատության մեջ քննված են ածականի տեսակները, համեմատության աս-

տիճանները, սրանց կազմությունը: Այնուհետև հեղինակն անցնում է թվականին, նրա տեսակներին, վերջիններիս կազմությանը:

Բավականին հարուստ է դերանունների համակարգը Հաղրութի բարբառում: Հետաքրքրական է, որ բառային հիմնական ֆոնդի մեջ մոտենող այս բառերը Հաղրութի շատ գյուղերում հաճախ միմյանցից զգալի հնչյունական տարբերություններ ունեն՝ երբեմն ուղիղ ձևում, ավելի հաճախ՝ թեք հոլովաձևերում: Աշխատության մեջ քննված են դերանունների տեսակները, նրանց հոլովումը, տարբեր գյուղերում դրսևորած յուրահատկությունները: Նշենք, որ այսպիսի տարբերությունները հեղինակը տալիս է նաև մյուս խոսքի մասերի կապակցությամբ, որ շատ կարևոր է:

Ա. Պողոսյանն այնուհետև հանգամանորեն քննում է բայը իր քերականական բոլոր կարգերով: Նախ քննում է դերբայները, սրանց կազմությունը, հիմնական նշանակությունը, ապա անցնում է եղանակային ձևերի կազմության ու կիրառությունների նկարագրությանը: Հաղրութի բարբառն ունի 3 խոնարհում՝ ալ, էլ, ու (Շաղախ-Խծարբերդ խումբը՝ միայն ալ և էլ): Ներկայացնելով ժամանակակից վիճակը, հեղինակը միաժամանակ կատարում է պատմական էքսպոսիցիաներ ցույց տալով բարբառի խոնարհումների առաջացումը՝ կապված հին հայերենի խոնարհումների հետագա փոփոխությունների հետ:

Բարբառն ունի 7 դերբայ՝ անորոշ, անկատար, ապաունի, վաղակատար, հարակատար, ենթակայական և շարունակական կամ ընթացակցական: Իր դերբայական (և ոչ միայն դերբայական) համակարգով Հաղրութի բարբառը մեծ ընդհանրություններ ունի Ղարաբաղի բարբառի հետ: Հիմնական տարբերությունն արտահայտվում է անկատար դերբայի կազմության մեջ, որով և որոշվում է բարբառի ճյուղային պատկանելությունը:

«Անկատար դերբայը Հաղրութի բարբառում ձևավորվում է լիս դերբայական վերջավորությամբ, որ կրճատմամբ տվել է ս. ինչպես՝ կ'իրիլիս > կ'իրիյիս > կ'իրիս» (էջ 103):

Ձևաբանության վերջին մասը նվիրված է չթեքվող խոսքի մասերի քննությանը: Իրրև դրական պետք է նշել, որ Ա. Պողոսյանը չթեքվող խոսքի մասերի շարքում առանձնացնում է եղանակավորող բառերը, որպես առանձին խոսքի մաս, և դրանք խմբավորում է ըստ իմաստի: Այս խոսքի մասերի բաժնում հատկապես մանրամասն են ներկայացված կապերը, որոնց կիրառությունների վրա հեղինակը առանձնակի ուշադրություն է դարձրել: Այս առիթով նշենք, որ մենագրության մեջ հատուկ ուշադրություն է դարձված խոսքի մասերի կիրառություններին:

Դա, բացի կապից, վերաբերում է նաև դերանվանը, բային, գոյականին:

Գրախոսվող աշխատության երրորդ մասը նրվիրված է բառագիտությանը, ուր քննվում են բարբառի բառային կազմը, նրա շերտերը՝ բուն հայերեն բառեր, փոխառություններ աղբյուրներից, պարսկերենից, ռուսերենից, արաբերենից, Հնդկական կատեգորիաներ, որ որոշ բառեր դուրս են մնում բառապաշարի հայտնի բոլոր շերտերից և, հետևելով պրոֆ. է. Աղայանի ճիշտ կարծիքին, դրում է, որ այդպիսի բառերը «կամ հնագույն փոխառություններ են Հայաստանի նախարնիկների լեզուներից, կամ էլ թերևս հնդեվրոպական բառեր, որոնք, սակայն, չեն պահպանվել հայերենի մյուս բարբառներում ու գրաբարում» (էջ 270—271):

Գրքի առավելություններից է նաև այն, որ նրանում քննության նյութ է դարձված բարբառի շարահյուսական կառուցվածքը: Հնդկական տվել է բարբառի շարահյուսական կառուցվածքի ամփոփ նկարագիրը և հատկապես կանգ է առել շարահյուսական այն երևույթների վրա, որոնք հատուկ են Հաղրութի բարբառին կամ նրանում ունեն յուրահատուկ դրսևորում:

Աշխատության հաջորդ բաժնում ներկայացված են բարբառային նմուշներ, որոնք հավաքված են Հաղրութի շրջանի բոլոր գյուղերից: Ցուրաքանչյուր տեքստին կից տրված է անհասկանալի բառերի համառոտ բացատրան:

«Հաղրութի բարբառը» աշխատության արժանիքների շարքը պետք է դասել նրա քարտեզները: Քարտեզների համար հնդկական վերցրել է բարբառի կառուցվածքի տեսակետից էական մի քանի երևույթներ և դրանք ներկայացրել ըստ տարրեր գյուղերում ունեցած դրսևորումների: Իբրև քարտեզի նյութ են ընտրված նւ, ւս, ւտ, ւն դերանունները, աւա, նրկւտտ մասնիկներով վերլուծական կազմությամբ հոլովները, բայերի խոնարհիչները, օժանդակ բայը, անկատար դերբայի կազմությունը և այլն:

Ա. Պողոսյանի «Հաղրութի բարբառը» աշխատության մեջ կան վիճելի հարցեր և թերություններ:

Վիճելի է հնդկական կարծիքը Հաղրութի բարբառի հնչյունների քանակի վերաբերյալ: Թեև քմայնացումը շատ տարածված է Հաղրութի բարբառում, որի հետևանքով առաջացել են մի շարք քմային հնչյուններ (զ՝, կ՝, ք՝, ան, օ և այլն), բայց սրանց քանակը, այնուամենայնիվ, սահմանափակ է, և դիրքային քմայնացման ամեն մի արտահայտություն չի կարելի համարել առանձին հնչույթ: Այսպես մոտենալով հարցին, հակառակ Ա. Պողոսյանի կարծիքի, մենք գրտնում ենք, որ Հաղրութի բարբառում չի կարելի ընդդունել դ՝, տ՝, թ՝, ձ՝, օ՝, ց՝, ճ՝, չ՝, լ՝ և

հնչյուններ: Պետք է ասել, որ հիշյալ հնչյունների արտասանության գործում դիրքային հանգամանքն իբրև պատճառ աննկատ չի մնացել հնդկական կողմից: Այս հնչյունների մի մասի վերաբերյալ հնդկական գրում է. «Սրանց առաջացումը (մենք կասեինք սրանց քմային արտասանությունը — Ս. Ա.) պայմանավորված է դիրքային հանգամանքով. մասնավորաբար թեթև ձայնավորների մոտ ձ. ծ. դ. ճ. չ. ծ արտասանվում են ձ՝, ծ՝, ց՝, ճ՝ չ՝, ժ՝» (էջ 11): Այս հանգամանքը վերաբերում է ոչ միայն հնդկական նշած, այլև վերոհիշյալ բոլոր հնչյուններին, և սրանց քմային արտասանությունը պետք է դիտել իբրև սոսկ դիրքային երևույթ ճիշտ այնպես, ինչպես որ այդպիսի փաստեր ունենք ժամանակակից գրական հայերենում: Հմտ. դ հրնչյունը զատում, ղեղեցիկ և գյուղ բառերում, ձ հնչյունը ձուր և ձյուն բառերում, լ հնչյունը լուվ և ծիլ բառերում և այլն:

«Հնչյունաբանություն» գլուխը կառուցված է այնպիսի սկզբունքով, որ ավելի օգնում է պատկերացնելու, թե գրաբարյան որ հնչյունը Հաղրութի բարբառում ինչի է վերածվել. քան թե գաղափար կազմելու Հաղրութի բարբառի հրնչյունների ժամանակակից վիճակի. իբրև համակարգի, մասին: Մինչդեռ բարբառների նկարագրական ուսումնասիրության նպատակը նրանց արդի վիճակի ուսումնասիրությունն է:

Ինչպես ասվեց վերը, մասնավորապես հրնչյունաբանության բաժնում Ա. Պողոսյանը Հաղրութի բարբառի իրողությունները համեմատում է գրաբարի հետ և ցույց է տալիս, թե Հաղրութի բարբառում տվյալ հնչյունական կազմ ունեցող բառը գրաբարի որ բառին կամ բառաձևին է համապատասխանում, որից է ծագում: Այդ համեմատությունները հիմնականում ճիշտ են, Թայց մի շարք դեպքերում բարբառի այս կամ այն բառի դիմաց ներկայացված են այնպիսի բառեր (իբրև գրաբարյան), որպիսիք չկան գրաբարում: Օրինակ, կիւրակամուտ > կ՝իւրկ՝ամուտ (էջ 35), կուտուածք > կուտվասկ (էջ 37), քըղ-րէլ > քուխպիլ (էջ 56) և այլն: Գրաբարում չրվկայված, բայց ենթադրությամբ վերականգնելի ող բառերը պետք է բերել համապատասխան նշումով. սովորաբար բերում են աստղանիշով: Թայց ավելի ճիշտ կլիներ բարբառային ամեն մի բառի դիմաց գրաբարյան բառ անպայմանորեն չորոնել և չլինելու դեպքում՝ չենթադրել նրա գոյությունը: Հին հայերենից ժառանգած արմատների միջոցով բարբառում կարող էին կազմվել և կազմվում են բարդ ու ածանցավոր շատ բառեր, որպիսի կազմություններ կարող էին չլինել գրաբարում: Եվ զա շատ բնական է:

Ա. Պողոսյանը անհայտ ծագում ունեցող բառերի շարքն է դասում, ի թիվս այլ բառերի:

նաև կրթելի բայր, Այս բառով անվանում են հետևյալ գործողությունը. մետաղե փոքրիկ ձողի (որ կոչվում է կրքեչ) օգնությամբ կոպիտ թելը հղկում են, վերացնում նրա ավելորդ մազմզուկները: Մեր կարծիքով, Հագրութի բարբառի այս կրքեչ բայրը գրական հայերենի նույնանուն բայն է, նրա պես կազմված է կիրք արմատից, բայց ունի նշված մասնավոր իմաստը: Նշենք, որ հրեշտունական կազմի տեսակետից հայերենի կրքեչ բայրը Հագրութի բարբառում պետք է լիներ և կա միևնույն կրքել ձևով: Ինչ վերաբերում է իմաստային կողմին, պետք է ասել, որ շնայած դրանց միջև իմաստային որոշակի տարբերությանը, այնուամենայնիվ կա նաև որոշ ընդհանրություն: Ինչպես կրթելով ու դաստիարակելով վերացնում են կրթվողի անցանկալի գծերը և ցանկալի բնավորություն են մշակում, նույն ձևով էլ կրքելով (<կրքիչ) վերացնում են թելի ավելորդ մազմզուկները, անհարթությունները, այն դարձնում հարթ, ողորկ: Իմաստային նշված բոլոր տարբերությունը, որ այնուամենայնիվ կա դրանց միջև, չի կարող մեր բացատրության վերաբերյալ կասկած հարուցել, որովհետև, ինչպես նշում է Հ. Աճառյանը, գրական հայերենի

«եկեր արմատի նախնական իմաստը ուսանիլ և կամ սովորել չէ» (Հայերեն արմատական բառարան, հատ. 3, էջ 1211): Այս տեսակետի ուշադրով է նկատի ունենալ կրքել բայի իմաստը գրաբարյան հետևյալ դարձվածի մեջ «կրթել օձի ընդ ծերպս վիմաց» օձի՝ քսվելով սողուն կելը բարբրի միջով՝ խորխը (շապիկը) փոխելու համար: Ի դեպ նշենք, որ Ղարաբաղի բարբառի կրքել բայը Աճառյանը իր «Բազմազան բառարան»-ում ներկայացնում է բոլրել ձևով, որ ոչ ճիշտ տառադարձության արդյունք է:

Այսպիսով, մեր կարծիքով, Հագրութի (այլև Ղարաբաղի) բարբառի հիշյալ կրքել բայը հայերեն կրքել բայից է ծագում, ինչպես և կրքել-ը՝ կրքիչ հայերեն բառից՝ վերջինս այդ բարբառին հատուկ մասնակի հնչյունափոխությամբ, այն է՝ ի>ե. հմմտ. միտք>մետք, վիգ>վեգ, ծիտ>ծետ և այլն:

Ինչպես երևում է, նշված թերությունները մասնակի բնույթ ունեն և չեն իջեցնում Ա. Պողոսյանի աշխատության գիտական կարևոր արժեքը:

Ս. ԱՐԲԱՆՄԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

Այլ. Մյասնիկյանի անվան Հանրապետական գրադարանում 1958 թ. աշխատանքներ են տարվում հայ տպագրիչ գրքի ամբողջական մատենագիտություն կազմելու ուղղությամբ: Բազմա-հատոր այդ մատենագիտության առաջին հատորը բեզդրեկելու է հայ հնատիպ գիրքը: Այն լինելու է մինչև 1800 թ. հայերեն տպագրված բոլոր գրքերի մի ժամանակագրական, ժանրագրված ցուցակ, որ տրվելու են յուրաքանչյուր գրքի անվանաթերթի պատճենը, հիշատակարանը, գրքի տպագրական առանձնահատկությունները, քանակական տվյալները (էջերի քանակ, չափս և այլն), գրքի գտնվելու վայրերը և ուրիշ տեղեկություններ:

1963 թ. գրադարանը հրատարակեց «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ» (կազմողներ՝ Հ. Գալթյան, Հ. Սիլվանյան, Ն. Ոսկանյան, Փ. Կարկառյան, Մ. Միրզոյան, Ս. Սաֆալյան, 303 էջ), որի առաջաբանում գրադարանի գեղավարությունը գիմում է գիտնականներին, դասերներին և բոլոր նրանց, ովքեր սրել ձեռք կարող են հշտել ու լրացնել այս ցուցակը, գրել «ցուցակում տեղ գտած թերթիների մասին» (էջ III):

Անդառաջելով «Ցուցակ»-ի առաջաբանում գրադարանի գեղավարության արած խնդրանքին,

մենք ուզում ենք մի քանի նախնական դիտարկություններ անել «Ցուցակ»-ի վերաբերյալ, նախապես նշելով, որ այն, իրոք, օգտակար մի ձեռնարկ է հնատիպ գրքի մատենագիտության բուն հատորը կազմելու հանապարհին:

Ամենից առաջ աչքի է զարնում այն, որ ներկա «Հայ հնատիպ գրքերի մատենագիտական ցուցակ»-ում տեղ են գտել այնպիսի գրքեր, որոնք իրականում չկան (և երբևէ չեն եղել): Ըստ որում, դրանց չլինելը իմացել են նաև կազմողները և չնայած դրան մտցրել իրենց ցուցակի մեջ միայն այն պատճառով, որ այդպիսի հիշատակված են եղել այն կամ այն մատենագիտական աղբյուրում:

Օրինակ, 413 համարի տակ կարգում ենք՝ Ժամագիրք: Կ. Պոլիս, տպ. Աստվածատուրի, 1735: Եվ ապա՝ Գլ 132, որ նշանակում է, թե այսպիսի հրատարակություն նշված է Գ. Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատության (1958 թ. հրատ.) 132-րդ էջում: Սակայն բերված նկարագրության տակ կա ծանոթություն՝ «Տե՛ս Ն՝ 439 նկարագրության ծանոթությունը»: Այս համարի տակ նույնպես ժամագիրք է նկարագրված, միայն 1738 թ. հրատարակություն: Կարգում ենք սրա ծանոթագրությունը. «Մույն հրատարակությունը Լևոն-